

جوائز ناجي نعمان الأدبية

prix littéraires
premios literarios
naji naaman 's
literary prizes

Վալերիո Բոթոլիչքո

Աւագեայ Ովասիս մը
կարճատեւ վայրէջք մը կեանքի
հովիտիին մէջ

(կարճ մտորումներ)

հայացուց ^a

**Հ. Գեորգ Թ.Ծ.Վ.
Եղիայեան**

Valeriu Butulescu

Thinker, writer and politician, born in 1953 (Preajba, Gorj – Romania). Engineer and Ph.D. in Sciences, he was elected MP after the revolution of 1989. With more than 20 books (poetry, essays, plays and translations), and aphorisms published in some 25 languages, he is freeman of more than one city, and bearer of several prizes, including Naji Naaman's Literary Prize for 2006 (Honour Prize).

Penseur, écrivain et homme politique, né en 1953 (Preajba, Gorj – Roumanie). Ingénieur et docteur en sciences, il a été élu député au premier parlement de Roumanie après la révolution de 1989. Avec plus de 20 livres (poèmes, essais, pièces de théâtre et traductions), ses aphorismes sont publiés en près de 25 langues. Citoyen d'Honneur à maintes reprises, il est lauréat de plusieurs prix, dont le Prix Littéraire Naji Naaman 2006 (Prix d'Honneur).

VALERIU BUTULESCU

Վալերիո Բութիլեսկո

OAZE DE NISIP – OASIS DE SABLE

WAHATUN MIN RAML

Sélection arabe de

NAJI NAAMAN

Traduction arménienne de

Mgr. GEORGES YEGHEYAN

!

ناجي نعمان

Վալերիո Բոթոլիչքո

Մտաւորական, քաղաքական դէմք ու հեղինակ գրական երկերու, ծնած է 1953-ին (Ռումանիա - Երեսպա Դուրի): Ճարտարագէտ եւ դոկտոր գիտութեան, 1989-ի յեղափոխութենէն ետք կ'ընտրուի երեսփոխան առաջին խոհրդարանին մէջ: Ունի քսանէ աւելի բանաստեղծական բանասիրական, թատերական եւ թարգմանական հատորներ: Իր իմաստուն առակները թարգմանուած ու հրատարակուած են 22 լեզուներով: Մէկէ աւելի անգամներ հռչակուած է որպէս պատուոյ քաղաքացի: Ստացած է բազմաթիւ գրական մրցանակներ որոնց շարքին՝ Նաժի Նասմանի 2006-ի գրական մրցանակը՝ իր այժմու աշխատասիրութեան համար:

Երբ կարդաս **Վալերիո Բոթոլիչքո**ն, Ռումանական իմացապաշտ գրականութեան ժամանակակից Ռահվիրան, կը զգաս թէ դուն քեզ կը կարդաս, եւ արդէն ըսած ես ինչ որ ինքը կ'ըսէ, եւ գրած ես ինչ որ ինք կը գրէ:

Ձարմանալի չէ, որովհետեւ մարդը նոյնն է իր յոյսերուն եւ յուսախաբութիւններուն մէջ, ան կը ձգտի դէպի մարդկայնացում, որ որեւէ վայրին եւ ժամանակին մէջ կարող է միացնել մարդկութիւնը:

Հրամցնելով Վալերիոյի գրական մտորումները հայերէն լեզուով, մենք հայ ընթերցողին ուշադրութեան յանձնած կ'ըլլանք ռումանացի այս մեծ խորհողին, գրողին, քաղաքագէտին ու ճարտարագէտին աշխարհագրացողութեան եւ հեղինակային նուաճումներուն մէջ իր արմատներէն մեզի հասնող ինքնութեան յայտնութիւնը: Արդարեւ, քսանէ աւելի իր լոյս տեսած գիրքերը որոնք թարգմանուած են քսանէ աւելի լեզուներով՝ Վալերիո Բօթոլիչքոյին կու տան վաւերական գրողի ինքնուրոյն հանգամանք մը:

Արամ Սեփեթճեան

Չօն

Այս գիրքը կը ձօնենմ
ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆԵԱՆԻՆ՝
նախկին բարեկամս
Ռումանիոյ խորհրդարանին մէջ

1

Մեր մահուան տարելիցները,
անգիտակցաբար, ամէն տարի կը կատարենք:

2

Մրջիւններու հսկայ գիւղաքաղաք մըն է, որուն մէջ
կ'ապրի յաղթանդամ մրջիւն մը:

3

Փիլիսոփայութեան մէջ
իմ անձնական տարակոյսներուն ապահովութիւնը ունիմ
միայն:

4

Վարդ մը բուեցաւ ինծի,
որովհետեւ այնքան գեղեցիկ եւ բուրումնաւէտ էր:

5

Սատանային ճիրաններէն ազատեցայ
Սակայն ինչպէ՞ս կրնամ ազատագրուիլ հրեշտակներու
բռունցքներէն:

6

Կ'ուզես բան մը գիտնալ բախտագուշակներուն մասին,
որքան որ վճարես իրենց, անոնք այնքան աւելի լաւատես
կ'ըլլան:

7

Տգիտութիւնն ալ պարտինք սահմանել ու բնորոշել
հանրագիտարան մը պատրաստելով, եւ զայն կոչել
տգիտութեան
հանրագիտարան:

8

Երեք անգամ կը հոլովեմ «գործել» բայը
եւ անմիջապէս կարիքը կը գգամ հանգիստի:

9

Մանուկներուն անկեղծութիւնը.
մաքուր աղբիւրի մը ջուրին կը նմանի:

10

Գերեզմանատուն:
Ո՛վ տապանաքարեր, վերափոխուեցէք մարդերու:

11

Ծաղկեփունջ:
Ուր յօժարակամօրէն ծաղիկները
զիրար կը համբուրեն:

12

Բիզնիսի աշտարակը:

Պարտիս կքիլ որպէս զի դառնաս նշանաւոր:

13

Չուկ մը որ կը լողայ իր արցունքներուն մէջ:

14

Առաւօտը, կը մտածէր դրամի մասին,
իսկ գիշերը նոյնը կ'երագէ:

15

Գերիբապաշտ հրապարակ մըն է, ուր կատուն կը հաչէ
եւ շունը կը մլաւէ:

16

Քննադատները կը տեսնեն նուագը
եւ մտիկ կ'ընեն գծագրութեան արուեստին:

17

Նոյնիսկ կարճամիտներուն միջեւ որոշ պայքար մը կայ:

18

Բանաստեղծութիւնը նման է դլփինի երգին,
բոլոր ականջները չեն կրնար զայն լսել:

19

Կը հետեւիս հովին զգալու համար փոթորիկը:

20

Կը տեսնեմ ժանգոտած լեռներ
երկաթեայ դուռը տակաւին չէ վերջացած:

21

Ով որ չէ տեսած լեռը, կը հիանայ բարձունքին մեծութեան:

22

Վաշխառուները միայն կը վայելեն ժամանակին անցքը:

23

Կ'ատենք քունը,
Սակայն միշտ կ'ուզենք քնանալ:

24

Երբեմն լաւ է կշռել բարութիւնը,
յաճախ ծառերը կը կքին պտուղներուն ծանրութեան տակ:

25

Թռչունը ազատագրուեցաւ երկրէն
այսուհետեւ պիտի դառնայ երկինքի գերին:

26

Նոյնիսկ եթէ արծիւը հաւ մը որսայ
կը մնայ միշտ արծիւ:

27

Թեթեւ անձրեւի փոխարէն, որքա՞ն մսխում կայ կայծակի :

28

Մեռելները ազատ են
Սակայն գերեզմաններուն պարիսպները արգելք են
ողջերուն:

29

Գիւղերուն մէջ երազը ծուլութիւն է:

30

Թռչունը կը սաւառնի
սակայն անոր շուքը կը **դեգերի** երկրի վրայ:

31

Արձագանքը յետոյ կը հասնի,
քու ձայնդ հեռաւորութիւններուն մէջ կը կրկնապատկուի :

32

Ինչո՞ւ համար է ցեխը,
մարդ պարտի կազմուիլ անժանգ մետաղով:

33

Զգալը չի ճանչնար բարոյական սպառումը:

34

Տգիտութեան հրշէջները:
Ուր որ լոյսի նշոյլ մը կը տեսնեն, կը կարծեն թէ հրդեհ է:

35

Երբ սիրոյ խաղը դադրի
սիրամարգը կը լռէ:

36

Խելացիութիւնը կը խայթէ
մինչ յիմարութիւնը կը խեղդէ:

37

Ի՞նչ է անճնասպանը
իր անձին դահի՞ճը թէ կամ գոհը:

38

Ինձ մէ ետք, լեռը պիտի մնայ միշտ լեռ:

39

Ստեղծագործ երեսակայութիւնը, իր ցնորքներուն մէջ,
կը հասնի իրականութեան գագաթներուն:

40

Թութակը, առասպելներուն համաձայն, կը քնանայ ամբողջ
օրը, մինչ զայն կը նկատեն որպէս իմաստութեան թռչուն:

41

Թափառականը միշտ նոր ճանապարհներ կը գտնէ:

42

Կրօնական վերանորոգումներուն դիմաց, չաստուածները
կը մնան միշտ ժխտական:

43

Երբ արելը կը գովենք, չենք ուզեր գովել անոր
պարտականութիւնները:

44

Սատանաներուն մասին:
Աստուած կը ներէ բողոքողներուն, սակայն անոնց
կը հազցնէ կոտորներ:

45

Գայլին հետ բանակցելէ առաջ զայն սանձահարէ:

46

Քարակոյտէ մը
կարելի է կազմել կամ հիմքեր, կամ ալ աւերակներ:

47

Երբ ընկղմելու սկսիս
մի ճառեր միասնական օգնութեան մասին:

48

Կան արժէքներ, որոնց կ'իջնենք:

49

Շոգեկառքը ինքզինք ազատ կը կարծէ
երբ երկաթուղիէն դուրս ելլէ:

50

Էշը կ'ընդունի բեռներուն ամբողջ ծանրութիւնը,
պայմանաւ որ հօտը առաջնորդէ:

51

Որդը դեղձին մէջ կը փորէ իր յաւերժութեան խորանը:

52
Ամէն անգամ որ օդանաւէ մը իջնէր
անաստուած կը վերադառնար:

53
Խուլութեան առաջին գոհերը, անոնք են,
որ զանգակները կը հնչեցնեն:

54
Յիմարութիւնը նուազ թանձր է քան խելացիութիւնը,
այս պատճառաւ միշտ մակերեսի վրայ կը ծփայ:

55
Որոշ մարդոց ապագան
շարունակութիւնն է անոնց սարսափելի անցեալին:

56
Օր մը բնակեցայ կնոջ մը սրտին մէջ,
որքան խճողում գտայ:

57
Իշխանութիւնը չունի յիմարներուն շապիկ:

58
Ով որ գլուխ չունի,
մարտահրաւէր կը կարդայ կախադանին:

59
Բացարձակ ոյժը առիծը դարձուց վայրագ անասուն մը:

60
Յաճախ օձերու հետ միասին կը ճզմենք անմեղ խոտը:

61
Շնորհակալութիւն արեւու,
նոյնիսկ եթէ ակամայ մեզ կը լուսատրէ:

62

Ներողամիտ ենք տարբեր կրօններու սատանաներուն հետ:

63

Մանր ոջիկները պատսպարան կը գտնեն ծառերու վերքերուն մէջ:

64

Տեսութիւնները բնաւ չեն մեռնիր,
յոռեգոյն պարագային, անոնք կ'իրականանան:

65

Երբ կիները զիրար քննադատեն, զարմանալի
թերութիւններ կը գտնեն:

66

Սատանան չի կրնար կատարեալ ըլլալ,
երբեմն կը սխալի, երբ բարիք կ'ընէ:

67

Չիերը շատ մը պայքարներ շահեցան
առանց բան մը հասկնալու պատմութեան յեղաշրջումէն:

68

Ալիքները կ'անցնին, սակայն ջուրին տառապանքը
յաւերժական է:

69

Ի՞նչ կ'արժէ յաւերժութիւնը անհետացող մոլորակի մը մէջ:

70

Մշակոյթը այնքա՛ն յառաջացաւ մարդոց մօտ,
մինչեւ իսկ անոնք պատերազմեցան գիրքի մը համար:

71

Ժամանակի ընթացքին, ժանգին խաւը պաշտպանողական
կը դառնայ:

72

Միթէ՞ փարատները կրնային երեւակայել թէ օր մը
բուրգերէն անմիջապէս ետք, պիտի վերջանային
անգլիական թանգարանին մէջ:

73

Լոյսին առատութիւնը կը կուրցնէ,
այս պատճառաւ կ'ընդմիջուի խաւարով:

74

Շատեր կը կարծեն թէ, եթէ գող մը գողնան,
ազնիւ բան մը ըրած կ'ըլլան:

75

Որքան անգաղտնապահ են այն գրագէտները,
որոնք կը կարդան ուրիշներուն գիրքերը:

76

Աղբանոցը կ'ըսէ, մաքրութիւնը կ'աղտոտէ:

77

Պիտի չթողում որ ընկղմիս, դուն մաս կը կազմես իմ
նաւակիս:

78

Քաջը ան է որ չի գգար վտանգը:

79

Մի՛ նախանձիք քարէն,
հակառակ իր յաւերժութեան, պաղ է:

80

Փոքր բաներ կան,
որոնք արժանի են արձանագրուելու գլխատառ:

81
Ինչպէս դրոշմաթուղթը,
մենք ալ ծերութեամբ կ'արժեւորուինք:

82
Ան եթէ ծովահարները գիտնային թէ Ռդիսեսի
նաաստիները
մոնով փակած էին իրենց ականջները:

83
Այսօր երկուշաբթի է,
մեծ հաւանականութիւն կայ որ վաղը երեքշաբթի ըլլայ:

84
Արձանին պատուանդանը մեզ կը բարձրացնէ,
այսինքն ինչ որ մեզ կը բարձրացնէ այն մասն է որ մեզի չի
պատկանիր:

85
Երգող թռչունները աշնան կը մեկնին,
իսկ ագռաւները կը մնան`
պատասխանատուութիւնները յանձն առնելու:

86
Ղեկավարութեան արուեստը:
Եթէ փափաքինք դէմ յանդիման դիտել երաժշտական
խումբը,
պարտինք մեր կռնակը դարձնել ժողովուրդին:

87
Մէրէն չենք մեռնիր, սակայն անկէ կը ծնինք:

88
Փռուած լուացքը չորնալու համար, ինքզինք կը կարծէ թէ
պայքարի մէջ է հովին հետ:

89

Շատեր Եկեղեցի կ'երթան,
յուսալով որ Աստուած, հոն պիտի ստուգէ իրենց
ներկայութիւնը:

90

Ունենալու համար երկու թելեր,
հարկադրուեցայ երդնով թէ բնաւ պիտի չթռչիմ:

91

Պիտի սիրահարուիմք արծիւներուն,
նոյնիսկ եթէ հաւերը աւելի օգտակար դառնան մեզի:

92

Բոլորը կը նախընտրեն ըլլալ առաջնորդ նաւաստիներ,
եւ ոչ ոք կ'նուգէ թիավարել:

93

Բանաստեղծութիւնը արեւուն տակ փայլող ցօղն է,
երբ այս ցօղը մեր կօշիկները թրջէ,
այն ատեն կը սկսի կեանքի տրոփիւնը:

94

Պաղ, անզգամ, քարացած,
այսպիսի մարդ մը, չաստուած մը կը նկատեմ:

95

Համաձայնեցանք երկինքի արցունքները՝ անձրեւ կոչել:

96

Իսկապէս զարմանալի է փառքը,
Էօժէնը նշանատր դարձաւ ոչ թէ իր ձիերուն համար,
այլ անոնց աղբերուն շնորհիւ:

97

Արուեստագէտները աշխարհը կը ճանչնան
այն պատկերով որով զայն մարդոց կը ներկայացնեն:

98

Քանի հանճարեղ նկարիչներ անշքացան,
որովհետև իրենց կը պակսէին գոյները:

99

Ծառերու պտուղներուն մէջ պէտք չէ տեսնել առատութիւնը,
այլ գոյատեւելու ծարարը:

100

Մէրը:

Բւրաքանչիւր պտուղի հատիկ՝ ծաղիկի մը ւսետումի
արդիւնքն է:

101

Այս հովը խռովարար է, ինչպէս հաշուապահի մը քունը:

102

Օձը իրաւունք ունէր,
չկայ դրախտ առանց սիրոյ:

103

Պրօմսէ ինքզինք գոհեց,
որպէս զի մենք հանդարտութեամբ մեր գլանիկները
վառենք:

104

Կարծեմ թէ դժոխքը ուրիշ բան չէ, եթէ ոչ
ելէկտրականացած կրակ մը:

105

Բարեբախտաբար կ'անգիտանանք աշխարհագրութիւնը,

մենք հաւասար ենք իրարու
առանց համանման ըլլալու:

106
Բառեր կան, հակառակ գրականութեան օրէնքներուն կը
ստականք մանր գիրերով գրել:

107
Կը լռեն, սակայն,
որքան աղմկալից են իրենց միտքերը:

108
Համայնավարութիւնը:
Խաչը՝ վերածեց կարմիր աստղի
խաչելու արուեստը սորվելէն ետք:

109
Քայլ առ քայլ, զիս կը հետապնդէր,
ծաղիկ մը կարծելով զիս:

110
Ո՞վ եմ ես,
առուակ մը որ կ'ուզէ բարձրանալ, դէպի իր ակունքները:

111
Այս հատընտիր գրութիւնները
կը նմանին հասարակաց գերեզմանի մը:

112
Իւրաքանչիւր մարդ կը ծիծաղի իր ակռաներուն
շարուածքին համաձայն:

113
Յաղթանակը՝ համոզելու մէջն է:

114

Գողմպոս Հնդկաստան պիտի հասնէր, սակայն ըստ
տվորութեան, Ամերիկան միջամտեց:

115

Այս էջերը, իմ օդանաւիս սեւ տուփն են:

116

Իր բանաստեղծութիւնը զմռսուած մարմնի պէս կարծր է,
այս պատճառաւ ժամանակին կը տոկայ:

117

Խումբ մը երաժիշտներ, կը նուագեն գործիքներու վրայ,
սակայն տգէտները կը բաւականանան սուլոցներով:

118

Ոչ մէկը կրնայ ինքզինք մեռած համարել,
եթէ իր մահուան հաստատագիրը չստորագրուի:

119

Թերթը, եւ միակ թերթն է որ զիս կը հրատարակէ:

120

Այսօր ալ իմ ձանձրոյթս պիտի դնեմ թուղթին վրայ,
որպէս զի, իրենց կարգին, ընթերցողներն ալ ձանձրանան:

121

Իմ բարձրացումներովս կը վճարեմ փրկագինը տուրքերու:

122

Գատավարութեան պատիժները կը մեղմանան
երբ դատաւորները դահիճին դերը կատարեն:

123

Անպայման ծուլութիւնը յոգնեցուցիչ է,
սակայն ծոյլերը ամենէն շատ կը հանգստանան:

124

Միթե՞ յախտենական աշխարհ մը կայ,
երբ մեռնինք կը գիտնանք:

125

Մէկ դար բաղերու փետուրներով գրեցինք,
բաղերը մասնակցեցան մշակոյթներու յառաջացումին:

126

Ժամանակը կանգ չ'առներ,
մենք աւելի գիտելիքներ ունինք քան Պիթագոր,(Pythagore)
սակայն յաջողեցանք պաքալորէայի քննութիւններուն մէջ:

127

Բանասէրը, իր աշխատասիրութեան աւարտին,
մատենագրութիւնը կը դնէ ինքզինք արդարացնելու համար:

128

Պարտինք չարչարուիլ սորվելու համար իմաստը
չարչարանքի լռութեան:

129

Հատիկները չեն սիրեր քնանալ ոսկեղէն սենեակի մը մէջ,
հողը կը նախընտրեն, նոյնիսկ եթէ անջրդի ըլլայ:

130

Միզիֆ (Sisyphus) պիտի չմեռնէր յոգնութենէն,
այլ ձանձրոյթէն:

131

Նախընտրելի է մեր մահուան թուականը չգիտնալ,
որովհետեւ ապահով սարսափէն պիտի մեռնինք:

132

Սկսայ նախընտրել թմբուկին փիլիսոփայութիւնը,
որքան աւելի զօրաւոր զարնենք զայն, անոր ձայնը աւելի
հեռուները կը հասնի:

133

Մտիպողաբար կիճը կը հակի մարդուն կուրծքին,
որովհետեւ ան՝
սիրտն ու դրամապնակը հոն կը պահէ:

134

Բողոր լեզուներուն մէջ մարդիկ նոյն ձեւով կը մրափեն:

135

Դեւերէն կազմուած խորհրդարան մը
բնական երեւոյթ է դիւային ընկերութեան մը մէջ:

136

Ի՞նչ կ'ակնկալէք մեզմէ,
կազմուած ենք հողէ եւ ջուրէ, այսինքն ցեխէ:

137

Մահմանափակ չէ այն անձը որ իր սեփական սահմանը կը
ճանչնայ:

138

Կատուն նախկին վագր մըն է,
ենթարկուած մտային երեք փոփոխութիւններու:

139

Տգիտութիւնը ծանր բեռ մըն է,
սակայն զայն շալկողը, չի զգար անոր ծանրութիւնը:

140

Վախէն աւելի խղճալին անոր հորիզոններն են:

141

Երբ ապուշը խոստովանի իր յիմարութիւնը,
այն ատեն կը սկսի զգաստանալ:

142

Լոյսին արագութիւնը որքան որ սաստիկ թուի,

կը մնայ հաւասար խաւարին արագութեան:

143

Պարտինք յարգել մեր մոլորակը,
ան մեր հասարակաց գերեզմանն է:

144

Քաջարի զօրավար մը ունեցայ,
որ առանձին՝ հաւաքական որոշումներ կ'առնէր:

145

Ներողամիտ եղէք այս յիմարութեան համար,
ան կատարուեցաւ գերագոյն օրինակի մը անունով:

146

Էօտիփի (Eudip) բանաստեղծին հարցով, հռոմէացիները
աւելի
խիստ պատիժ մը չգտան քան զինք արտրել դէպի
հռոմէական ծովափ:

147

Այս մարդը ոսկիէ է, փայլուն եւ կակուղ է:

148

Հին Եկեղեցիները կիսով մը թաղուած են,
հողակոյտը աւելի դիւրաւ կը բարձրանայ քան հաւատքը:

149

Եթէ կ'ուզես չարը պատժել, ջանա՛ զայն դարմանել,
չարիքի մեծագոյն պատիժը, զայն բարիքի փոխելն է:

150

Երբ մեր զինուորական օդանաւերը գետինն են,
մեր ազգային ապահովութիւնը ամենարարձր աստիճանի
վրայ է:

151

Գետին կը նայիմ,
եւ անձնատուր՝ գերեզմանս կը փնտռեմ:

152
Ազամեննոն թագաւորը հանուեցաւ իր դամբարանէն,
որպէս զի զքօսաշրջիկները կարենան տողանցել:

153
Արդարութեան գթութիւնը անարդարութիւնն է:

154
Ոչ որ ուշադրութիւն կ'ընէ թէ արծիւը կաղ է,
իր սրունքը թաքնուած է իր թեւերուն ոսկորին տակ:

155
Լեոնիտաս (Leonidas) կարմիր զգեստ հագցուց իր
մարտիկներուն,
որպէս զի հոսուն արիւնը չնշմարէ իրենց մարմիններուն
վրայ:
Պահէ վերքերդ որպէս զի խաբես թշնամին:

156
Արուեստագէտները ու՞ր կրնան ծածկել իրենց երագները,
երկինքի մէջ անշուշտ՝ ցնորքներու բարձրագոյն
ոլորտներուն մէջ:

157
Աստուած լեզուները ստեղծեց,
որպէս զի թարգմանիչներուն օրապահիկը ապահովէ:

158
Ի՞նչ է երեկը եթէ ոչ վաղը՝
մերկացած յոյսէ,
եւ պղծուած պատմութենէ:

159
Սամսոնը իշու կզակով հազար մարդ սպաննեց.

Միթե կրնա՞ք երեւակայել թէ ի՞նչ կրնար ընել հիւլէական
զէնքով:

160

Չարմանալի է. Յիսուսի երանիներուն դիմաց,
առաքեալներուն մէջէն, միայն Յուդան վողոված մեռաւ:

161

Ընտրանիները փոքրամասութիւն պիտի մնան,
սակայն հակառակ անոր, ազգի մը ճակատագիրը միշտ
մակերեսային ամբոխին կամքին ենթակայ է:

162

Լռութիւնը ոսկի է,
երկչոտներու համար միայն:

163

Սատանաները երկինք կը մտնեն դիւանագիտական
անցագրով:

164

Ճամբաներու վրայ բուսնիլ մերժող խոտին
արժանապատուութենէն՝ նշոյլ մը ունիմ տակաւին:

165

Իսկական արուեստագէտը երբեմն իր մահէն ետք ալ,
կը մեծնայ:

166

Ինչպէ՞ս կը համարձակիք այս բաները գրել օրաթերթերու
մէջ:

Գիտէ՞ք թէ որքան վտանգաւոր են,
Հէյ, միթէ՞ կարդացող կ'ունենան:

167

Քաղաքականութիւնը նորէն երկրագունդը եռացումի կը
տանի,

բարեբախտաբար սառուցեալ դար մը հասնելու վրայ է:

168

Լեռ ըլլալ,

կը նշանակէ խոր հովիտներու մէջ ամենաբարձր ըլլալն է:

169

Յաճախ գրութիւններուս մէջ ես ինծի հակաճառեցի,
Սակայն պարտիմ խոստովանիլ թէ համոզումով զայն
կատարեցի:

170

Գողերու տաճարը, երբեմն, կը պղծուի արդարութեան
կողմէ:

171

Պոռա՛ անապատին մէջ,
ոչ ոք պիտի հակաճառէ քու խօսքերուդ:

172

Խաչուիլը տառապանք է, սակայն ամբոյններուն
ներկայութիւնը խաչուելու պահուն աւելի տառապալից է:

173

Կը բաղձամ իսկական թշնամի մը ունենալ,
կեղծ բարեկամներուս հաւատարմութիւնը զիս կը խեղդէ:

174

Ձեռքդ երկարէ անոր միայն՝ գոր կրնաս ազատել:

175

Ես չեմ ջատագովեր յաւերժութիւնը, այլ կամաւոր մահը:

176

Ո՞վ եմ ես,

անհետացող գիշեր մը եւ պսպղուն խաւար մը:

177

Անկարելի է յաղթել պղտոր մարդուն:

178

Մրրիկի նման արեւմտեան հովը փչեց,
արելեքի վրայ, անկարող սահմանապահներուն
ակնարկին ներքեւ:

179

Անորոշ վիճակի մը մէջ մեռնիլ,
փաստ է լիրբ վիճակի մը եւ խոր
անպատասխանատուութեան մը:

180

Բնաբանս՝
առանձին ըլլալ ամենամօտիկը մարդոց:

181

Բարկացաւ երբ իրեն դաժան ճշմարտութիւնը ըսի,
զինք հանդարտեցնելու համար պարտ էի իրեն գլորել
գոռացող երեք սուտեր:

182

Ուր յիմարութիւնը կ'իշխէ,
կարելի չէ ապրիլ եթէ ոչ գէշ կեանք մը:

183

Թռիլ ուրիշներուն վերեւ,
քաղաքավար միջոց մըն է զիրենք արհամարհելու:

184

Կը ջանանք փայլեցնել մեր պակասութիւնները,
մեր ձիրքերուն ոսկիին միջոցաւ:

185

Կեանքը իբր նիւթ որկրամու նիւթ մըն է,
կեանքը անյագ նիւթ մըն է:

186
Ով Տէր, տուր մեզի թեւեր,
երկիրը լի է գեղեցկութեամբ
պարտինք բան մը չարհամարհել:

187
Փնտռեցէք,
իմ մէջս ամօթալի բան չկայ, մի միայն՝ խոնարհութիւնս:

188
Եթէ Աստուած առասպել մ'ըլլար,
ինչո՞ւ կ'ուզէք զայն ուրացումով մը փոխարինել,
միթէ՞ ուրացումը ուրիշ առասպել մը չէ:

189
Կրօնի մտրակով ընտանի դարձած, եւ
դաստիարակութեան բռնաբարութեամբ կրթուած մարդը կը
զգայ անասնային ցանկութեան անդիմադրելի ոյժը:

190
Յուդարկատրութեան պահուն, ծաղկեփունջերն ու
արցունքները կը մեղմացնեն հանգուցեալին հեռացումը:

191
Մեր սէրը այնքան հզօր է զիրար բաժնելու չափ:

192
Այնքան հանդարտ է եւ անզէն,
նման խայթող օձին:

193
Գիշերային պահերուն սովորաբար հոգիները կը շարժին,
երբ տեսութիւնը տկար է, ու երբ վախն ու երեսակայութիւնը
զօրատր են:

194

Մի անցնիր չափն ու սահմանը,
իշուն վազքը, հիացում խելէն աւելի խնդուք կը գրգռէ:

195

Բարեպաշտներուն հետ միասին յալիտենականութիւն
անցնիլդ աւելի ահարկու է քան դժոխքին կրակը:

196

Ինչո՞ւ համար կը հրատարակեմ գաղտնիքներս,
որովհետեւ վստահ եմ ընթերցողներուն
գաղտնապահութեան:

197

Խնդրեմ,
մեղմ եղիր ուրիշներուն մոլեռանդութեան նկատմամբ:

198

Ինչպէս ատելութեան՝ նոյնքան սիրոյ մէջ
կան ազահ մարդիկ, որքան՝ առատաձեռն:

199

Անաստուածները աւելի անպատկառ են քան
մոլեռանդները:

200

Կի՛նն է իսկական շարժիչ ոյժը կեանքին,
սակայն մարդը՝ բանալին:

Քաղաքականությունը չի կրնար ազդել ազգի մը խիղճին,
առանց թմրեցնելու սուտը:

202

Ուր ծննդաբերություն՝
հոն չկայ յաւերժություն:

203

Մարդը աստուածային արտադրող մըն է, սակայն
անհետացող:

204

Այս փորձառությունը զիս տարիով մը ծերացուց, սակայն
մէկ տարի աւելի իմաստուն եւ մահուան մէկ տարիով աւելի
մօտ դարձայ:

205

Դահիճը կը մնայ միշտ ոճրագործ՝
սակայն արդարությունը զինք կարգեց որպէս պաշտօնեայ:

206

Աղանիները՝ որքան հաւասարակշիռ թռչուններ են,
միթէ՞ կը կարծէք դիրքին է սիրաբանություն ընել
ելեկտրական թելին վրայ:

207

Յարգէ պարտեալները,
Որպէս յաղթական քու փառքդ գոյություն պիտի չունենար
առանց իրենց պարտութեան եւ խոնարհեցումին:

208

Կ'երդնում ձեզի,
ես չեմ հաւատար երդումի:

209

Երբ գոցեմ աչքերս,
կ'ուզեմ խորը տեսնել:

210

Տակաւին յուշերուս մասին կը հարցնե՞ս.-
աւագեայ ովասիս մը կորսուած յիշողութեան ծալքերուն
մէջ:

211

Գրադարանին մէջ, միայն յիմարն է որ կը տառապի
առանձնութենէն:

212

Որքա ն տագնապներ կը թաքնուին երբեմն
«հանդարտութիւն» բառի ետին:

213

Անօթութիւնը կը պահէ իր մէջ ապրելու ցանկութիւնը:

214

Ինչո՞ւ համար իր օրագիրները չ'արձանագրեր.
ամէն օր անհրատարակելի արարքներ կը գործէ :

215

Երկարէ ձեռքդ պարտեալին, օգնէ իրեն որպէսզի
վերականգնի, եւ դուն անգամ մը եւս յաղթանակի
երջանկութիւնը պիտի ապրիս:

216

Լուծում չեմ առաջարկեր,
այլ միայն տարակոյս կը դնեմ համեմատութեան մէջ:

217

Այսպէս կը մտածէ ջրաբաշխը,
«Ես Յիսուս Քրիստոսի աշակերտն եմ, ան՝ ջուրը փոխեց
գինիի, ես գինին կը փոխեմ ջուրի»:

218

Արուեստագէտը,

մոռացումը զինք ատելի կը սարսափեցնէ քան մահը:

219

Ուրիշներ չեն կանգնիր եթէ ոչ ձիուն թամբին տակ:

220

Ես զիս ազատ կը զգամ,
բանտուած իմ աշխարհիս մէջ:

221

Երեք օրուան արձակուրդ կ'առնեն,
տան մէջ կը փակեն դուռս,
եւ կը գրեն ողբերգութիւն մը առանձնութեան մասին:

222

Քահանան.
«Տղաս, մեղք է, այսքան առաքինի ըլլաս»:

223

Եթէ փտածութիւնը ջութակի վերածուէր,
Բականինիէն ատելի լաւ պիտի նուագէր:

224

Տուրքերու եւ գեղեցկութեան մասին.
չկայ պատկառելի բան, եթէ տուրքի չենթարկուիր:

225

Ով որ ծննդաբերութեան վեհութիւնը կը հասկնայ,
կ'ընդունի մահուան անհրաժեշտութիւնը:

226

Եթէ կ'ուզես որ ամբոխները քեզի հետեւին,
խոստացիր իրենց ինչ որ կ'ակնկալեն:

227

Նախախնամութեան հեռաձայնին թիւը,
հեռաձայնի «ղեղին էջերու» գիրքին մէջ

ուստիկանութեան եւ հրշէջներուն թիւերուն միջեւ պէտք է գրել:

228

Յիսուս Քրիստոս քուէարկողներուն մեղքերը շալկեց. սակէ կը բացատրուի իր ընտրական յաջողութիւնը:

229

Անգործութիւնը մեզ կը պաշտպանէ մեղքէն, սակայն ծուլութիւնը մեծագոյն մեղքն է:

230

Ռումանացիները, համայնավարութեան շրջանին.- հանդուրժելէն ետք պաղին, դժոխքի կրակը գիրենք պիտի չվախսեն:

231

Խրտուիլակը:

Թռչունները կը կարծեն թէ մարդ է, եւ կը հեռանան:

232

Աղեքսանդրիոյ գրադարանին հրդեհը գիշերը փոխեց ցերեկի, սակայն՝ իբրեւ հետեւանք խաւարի երկար դարեր ունեցան:

233

Մահագոյ մը կը կարդամ եւ երկար շունչ մը կը քաշեմ ըսելով, տակաւին իմ մահագոյս չէ:

234

Միրամարգները աշնան կը մեկնին, սակայն մանուկներուն ծնունդը շարունակական է:

235

Ի՞նչ բան փնտռեցի քաղաքականութեան մէջ,

Ան լաւագոյն վայրն է ուսումնասիրելու համար մարդկային
խեղճութիւնը:

236
Ուշիմ հեռաձայններ յայտնուեցան,
իրենց սեփականատէրերէն՝ աւելի:

237
Ռումանական ժողովրդային առասպելներու մէջ աւելի
ազնիւ բան չկայ, քան հարուստներուն դրամները գողնալ եւ
զանոնք մսխել աղքատներուն հետ սրճարաններուն մէջ:

238
Յարգենք որդերը,
անոնք մեզմէ աւելի բարձր են սննդական
աստիճանաւորումին մէջ:

239
Անձնասպանութիւնը ոճիր է,
անձնասպանները պարտին նորէն յարութիւն առնել որպէս
զի ամենախիստ պատիժներուն ենթարկուին:

240
Մահը, վերջակէ՞տ է թէ ստորակէտ:

241
Չարմանալի են առուակները,
դէպի ծովերը կ'ուղղուին,
նոյնիսկ եթէ հոն իրենց ինքնութիւնը պիտի կորսնցնեն:

242
Խոնարհութեան մէջ ալ,
ինքնահաւանութիւն կայ:

243
Երբեմն մեր գլուխը մեր ափերուն մէջ կ'առնենք,
ի՛նչ ծանր բեռ է:

244

Ես երջանիկ եմ, որովհետեւ տակաւին կրնամ լալ:

245

Եղջիւրը իր կոտոշները ամէն տարի կը փոխէ.
կարգ մը ամուսնացեալներ, իրենց կոտոշները յաճախակի
կը փոխեն:

246

Նկատելու է՝ թէ երբ վանդակը լաւ գոցուած չէ,
առիւծը միշտ իրատունք ունի:

247

Տգեղը առինքնող դարձուցին՝ երբ ջանացին զայն մրտտել:

248

Այնքան նուրբ եւ ազնիւ սուտեր կան,
որ յաճախ չափազանցեալ քաղաքավարութեան խորը
ներելի սուտեր են:

249

Չեմ գներ եթէ ոչ սուղնոց գիրքեր,
անոնց գինը՝ զանոնք կարդալու կը ստիպէ:

250

Ծառերը չեն փոխեր իրենց հայրենիքը եթէ ոչ սահմանին
պատճառաւ:

251

Հին դարերուն՝ գողերուն վախը,
մեծ ծառայութիւններ մատոյց այսօրուան հնագէտներուն:

252

Ժամանակ չունի հարստանալու, միշտ կ'աշխատի:

253

Առատաձեռն կը դառնամ՝ երբ անկարող եմ մերժելու:

254

Պղպջակի նման՝ միշտ դատարկ եւ ծփացող:

255

Մի նկատեր դուն քեզ գիղիկն ապուշը,
խոնարհութիւն չէ ասիկա:

256

Յեխը չի խանգարեր մեզ,
միայն՝ երբ աղտոտէ մեր կօշիկները:

257

Այծը բնաւ պիտի չհասկնայ թէ ինչո՞ւ համար [Քրիստոսի]
Յարութիւնը կը տօնենք ոչխարի միտով:

258

Այն աստիճան աղքատ էր,
որ բնաւ թշնամիներ չունէր:

259

Տարուինի տեսութեան մէջ,
կարգ մը կապիկներ գրպարտութիւն կը նկատեն:

260

Կեանքը օձի թոյնին նման է,
կամ կը բուժէ, կամ ալ կը սպաննէ:

261

Ոսկին դիւրաւ կը փոխէ իր ձեւն ու տէրը:

262

Կրնանք նկատել թէ ուղղամիտ մարդը՝ գող է
որ բնաւ չէ գողցած:

263

Աղբերը որպէս մղձաւանջ ունեցաւ,
աւել մը երագեց:

264

Հեղուկները ամանները կը նկատեն որպէս բանտ,
սակայն կը մոռնան թէ՛ այս ամանները պատճառ են իրենց
պահպանումին:

265

Չար էք դուք,
ջրամբարի վրայ գրած էք H₂O
երեք լեզուաբաններ ծարաւէն մեռան:

266

Մարդուն համար կատարելութիւնը,
կնոջ ծախսերէն աւելի, դրամ շահիլն է:

267

Երկաթի եւ ածուխի կակուղութենէն կը շինուի պողպատի
կարծրութիւնը:

268

Կիները տերեւներու նման են,
որքան թառամին, աւելի աղմկարար կը դառնան:

269

Աղքատութենէ աւելի ապահով կղպանք մը չկայ:

270

Վայրաշարժը գրեթէ բնաւ չի մտահոգուիր,
վերջին կարգի պահանջներով:

271

Դեղձանիկը գիտցաւ վանդակին կարեւորութիւնը
երբ շրջապատուեցաւ կատուներէն:

272

Այս է մարդը,
չի գիտեր գոյութեան պատճառը, եւ հակառակ անոր
կ'ապրի:

273
Բարդ յիմարութիւններ կը գտնուին,
որ միայն իմաստունները կրնան գործել:

274
Կարգ մը մարդիկ պարտին բազմաթիւ կեանքեր ապրիլ,
որպէս զի իրենց մահապատիժը կատարեն:

275
Եթէ կեանքը դիպուածով գոյութիւն ունեցաւ,
արդեօ՞ք պատճառներ կան՝ անոր իմաստ մը փնտռենք:

276
Մեղուի նման,
կրնամ խոր խայթել մէկ անգամուան համար:

277
Գիտէի թէ կեանքին գինը սուղ է,
սակայն հիանդանոցին մէջ գիտցայ թէ մահը աւելի սուղ է:

.....

الثقافة بالمجان

سلسلة كتب أدبية مجانية أسَّسها ناجي نعمان عام ١٩٩١ وما زال يُشرفُ عليها

Ath-Thaqafa bil Majjan

Série littéraire gratuite établie et dirigée depuis 1991 par

Free of charge literary series established and directed since 1991 by

Serie literaria gratuita establecida y dirigida desde 1991 por

Naji Naaman

OAZE DE NISIP – OASIS DE SABLE

WAHATUN MIN RAML – واحدة من رمل – واحة من رمل

Վալերիո Բօթօլիշքօ – دشتی از شن

© Tous droits réservés – All rights reserved – Todos los derechos reservados محفوظة الحقوق

Maison Naaman pour la Culture & www.najinaaman.org

